

Հարցազրույց կառուցապատող Գարուշ Պապիկյանի հետ

**-Պարոն Պապիկյան, ես ձեզ տեղեկացրեցի, թե մենք Երևանի Թևոսյան 4/1 հասցեի հողատարածքի օտարման վերաբերյալ ինչ գիտենք, ինչ աղբյուրներից: Ինձ հետաքրքրում է՝ երբ դուք այդ հողը ձեռք էիք բերում, գիտե՞իք, որ դա պատկանում է ՊՆ բարձրաստիճան պաշտոնյայի: Եթե գիտեիք, ընդհանրապես այդ գույքի ծագումով հետաքրքրվե՞լ էիք:**

-Երբ ես գնում էի այդ գույքը, այդ գույքը պատկանում էր լրիվ ուրիշ անձի, բայց քանի որ գնումը կատարում էի բանկի միջոցով, բանկը ինձ հարցրեց՝ վերջին երկու գնորդը... հողի ծագման աղբյուրները: Երբ որ ես պահանջեցի, ինձ տվեցին, այդտեղից արդեն իմացա, որ բարձրաստիճան պաշտոնյայի գույք է: Իրենց ասեցի, որ բանկն ասում է, որ հնարավոր է խնդիր լինի, ինձ պատասխանեցին՝ նախկինում ինչ եղել է, գումարային խնդիր չի եղել, մենք այդ գումարը վճարել ենք, կադաստրային արժեքով գույքը գնել ենք: Դրանից հետո ես արդեն որպես գնորդ չհետաքրքրվեցի հետագայով: Դիմեցի Կադաստրի կոմիտե, ստացա «միասնական» տեղեկանքը, որ գույքի վրա ոչ մի սահմանափակում չկա և գործարքն արեցի:

**-Գույքի ձեռք բերման հարցերը Դուք ՀՀ ՊՆ ՁՈՒ սպառազինության վարչության նախկին պետ Պողոս Պողոսյանի հետ էիք քննարկո՞ւմ:**

-Պողոս Պողոսյանի հետ մի անգամ հանդիպել եմ, երբ իմացել եմ, որ գույքը սկզբում Պողոս Պողոսյանին է եղել, իսկ դրանից առաջ ես խոսել եմ Լուսիկի (Պողոս Պողոսյանի զոքանչը-հեղ.) հետ:

**-Բայց ձեզ համար հասկանալի էր, չէ՞, որ դա Պողոս Պողոսյանի գույքն է:**

Հասկանալին ես պահին... ես նման խնդիր չտեսա, քանի որ գործարքը կատարված էր, քանի որ «միասնական» տեղեկանքով սահմանափակումներ չկային, ես հանգիստ գնացի առքուվաճառքի: Գույքը գնահատեցի, գրավադրեցի բանկ և գնեցի:

**Գիտեի՞ք, որ քրեական գործ կա այդ գույքի ծագման հետ կապված:**

-Ոչ: Քրեական գործի մասին տեղեկացել եմ ընդամենը մեկ շաբաթ առաջ, Կադաստրի կոմիտեից սահմանափակումների մասին տեղեկանք ստանալուց հետո: Դրանից հետո հանդիպել եմ վաճառողի հետ: Հարցրել եմ՝ որ արգելանք կա, ի՞նչ է լինելու: Վաճառողը պատասխանել է, որ պայմանավորվել է իրավաբանի հետ, իրավաբանը գնացել է և փորձում են հասկանալ՝ եթե վնաս կա, ինչ է պետք, ոնց է պետք, որ այդ հարցերը լուծեն, վճարեն, գույքը սահմանափակումներից, արգելանքից հանեն:

**Դուք Պողոս Պողոսյանի հետ քննարկե՞լ եք, եթե հանկարծ ինչ-որ պատմութայուն լինի այս հողի հետ կապված, այդ հարցերը ո՞նց եք կարգավորելու:**

-Ես ավտոմատ հետ եմ տալու հողը, գումարը հետ է տալու ինձ:

**Այսինքն՝ քննարկել եք:**

-Այո: Միանշանակ:

**Պայմանավորվե՞լ եք:**

-Միանշանակ:

**-Լավ: Այս գույքը Դուք ձեռք եք բերել այն ժամանակ, երբ Հակակառուցչին կոմիտեում քրեական գործ կար, նախաքննություն էր ընթանում: Տպավորություն է, որ դիտմամբ արգելանք չի եղել այս գույքի վրա, որ Պողոս Պողոսյանը կարողանա օտարել այն:**

-Ընդհանրապես համաձայն չեմ Ձեր կարծիքին: Ընդհանրապես նման կարծիք չունեմ, քանի որ հանդիպելուց, գրավադրելուց, բանկում խոսելուց, միասնական տեղեկանք հանելուց նման ոչ մի խոսակցություն չի եղել: Եվ գույքը գնելուց 3 օր հետո ես քաղաքապետարան դիմում եմ մուտք արել, որպեսզի ինձ տրամադրեն շինթույլտվություն:

**-Մենք գիտենք, որ Դուք ընկերական հարաբերություն ունեք Իշխան Չաքարյանի որդու՝ Վարդան Չաքարյանի հետ, գործընկերային հարաբերություններ ունեք փեսայի՝ Խաչատուր Սաֆարյանի հետ: Ենթադրում ենք, որ այս ամենում դուք ձևական եք ներկայացված, և այս բիզնես գործունեությունը Իշխան Չաքարյանի և իր մերձավորների բիզնես գործունեությունն է:**

-Ընդհանրապես նման բան չկա: Լրիվ մերժում եմ Ձեր ասածը, որովհետև կառուցապատման իմ գործունեության հետ ոչ Իշխան Չաքարյանը, ոչ Իշխան Չաքարյանի տղան, ոչ փեսան ոչ մի ամենություն չունեն:

**-Դուք կառուցապատման բիզնեսով զբաղվում եք 2019 թ.-ից: Ինչո՞ւ մինչ այդ նման բիզնեսով չեք փորձել զբաղվել:**

-Մինչ այդ ուրիշ բիզնեսով էի զբաղվում: Հիմա շարունակում եմ ու 2019 թվականից տեսա, որ շուկայում պահանջարկ կա և որպես բիզնեսմեն սկսեցի կառուցապատում էլ անել:

**-Քաղաքական, տնտեսական լծակներ պե՞տք են նման բիզնես սկսելու համար:**

-Ընդհանրապես պետք չեն:

**-Հայաստանում հիմա ով ցանկանա կարո՞ղ է նման բիզնես անել, մեծ շենքեր կառուցել Երևան քաղաքում:**

Միշտ:

**-Հանգիստ կարող է նաև կասկածելի ծագում ունեցող գույք ձեռք բերե՞լ:**

-Ձեր ասած կասկածելի ծագում ունեցող գույքը ես չեմ հասկանում, քանի որ երբ դու գնում ես գույք ամենուր, գույքի հիմքերը պարզելու համար չես կարող գնալ եսիմ ուր հասնել: Այսինքն, ամեն մի գույք ձեռք բերելուց դու մի հատ գնաս, չգիտեմ՝ դատախազությունով, ԱԱԾ-ով հարցումներ անես, որ հասկանաս՝ այդ գույքը որտեղի՞ց է, ի՞նչ է: Օրենքն ի՞նչ է ասում: Ունենք կադաստրից «միասնական» տեղեկանք, գույքի վրա սահմանափակում չկա, գնում ենք կամ նոտարի մոտ կամ բանկ՝ գույքն ամենուր:

**-Նկատի ունեմ, որ աշխատավարձով ապրող ՊՆ գեներալը նման հող է ձեռք բերել, դա ձեզ համար կասկածելի չէ՞ր: Ազդանշան չէ՞ր, որ կասկածելի է:**

-Ներողություն, բայց ինձ ընդհանրապես չեն հետաքրքրում ոչ մեկի գումարները, թե որտեղից, ինչով է ձեռք բերել: Ես չեմ էլ խորացել: Երբևիցե ինձ թույլ էլ չեմ տալիս հարցնել՝ դիմացիս անձին որտեղից գումար, ինքն աշխատավարձով է ապրում, թե ինչով է ապրում, ինչով է գույք ձեռք բերում:

**-Ձեք էլ փորձո՞ւմ կարծիք կազմել գույք վաճառողի մասին:**

-Երբևիցե չի հետաքրքրել ինձ նման բան: Երբևիցե չեմ փորձել ինչ-որ անձի մասին, նման բանի մասին հետաքրքրվել:

**-Մենք գիտենք, որ պայմանագրի գինը, համենայդեպս՝ վարկը կազմել է 404 միլիոն դրամ:**

-420 միլիոն դրամ, 404 միլիոնը վարկն է, 16 միլիոն դրամ ես հավելյալ ավելացրել եմ:

**-Այդ ամբողջ գումարը փոխանցել եք Պողոս Պողոսյանի՞ն:**

-Լուսիկին (Պողոս Պողոսյանի զոքանչը-հեղ.):

**-Բայց փողը վերադարձնելու մասին Պողոս Պողոսյանի հետ եք պայմանավորվել:**

-Ես ասացի, որ երբ եկավ գույքի ծագման հարցը, մի անգամ հանդիպել եմ Պողոս Պողոսյանի հետ: Ես որպես վաճառող ճանաչում եմ Լուսիկին:

**-Բայց նաև առնչվել եք Պողոս Պողոսյանի հետ:**

-Այո: